

Երկու նկատողութիւն ևս կանոնադրութեան կազմութեան նկատմամբ. 1) Ծրագրելի ցանկի մէջ չէ մուծուած դումարները բաշխումը, որ, հաստատապէս համոզուած ենք, կնուիրաբերուեն և ապագայում հասարակական հաստատութիւններով և մասնաւոր անհատներով, ուստի մի քանի ելից յօդուածները կ'ընեն անապահով, 2) Այլի առաջ ունենալով այն օրէնքը, որ Կայսերական հնադիտական Յանձնաժողովին է միայն յատուկ իրաւունք վերապահուած կայսրութեան սահմաններում պետական և հասարակական հողերի վերայ պեղումներ անելը, որ միեւնոյն ժամանակ պարտաւորեցնում է «պեղման ժամանակ բացուած թանկագին և անձնապէս գիտական անասկէտից նշանաւոր աւարկանները» ուղարկել նոյն Կայսերական հաստատութեանը «Բարձրագոյն բարեհաճ տնօրէնութեան ներկայացնելու համար» (տե՛ս. 1889 թ. Մարտի 11-ի Բարձր. հրամանը) — ես կանոնադրութեան նախագիծը ներկայացրի Կայսերական հնադիտական Յանձնաժողովին քննութեան, որը և առաջարկելով, իրեն վերաբերող յօդուածներում մի քանի փոփոխութիւն անել, մնացած մեծ մասի վերաբերութեամբ իւր լիակատար համակրանքն արտայայտեց մեր ձեռնարկութեան համար:

Թարգմ. Ա. Վ.



ՇԻՐՎԱՆՁԱԴԷԻ ՎԷՊԵՐԻ ՆԻԻԹԸ

V.

Այժմ տեսնենք, թէ քաղաքի բնակչի հոգեբանութեան այդ տարրերութիւնը ազդել է շիրվանդագէի վէպերի վերայ և նրա յաջուցած խնդիրները կապւում են այդ հոգեբանութեան հետ թէ՞ ոչ:

Պատասխանը դրական է: Շիրվանդագէի ամբողջ դրական դործունէութիւնը մի վերին առաւելմանի ազատամիտ բնոյթ ունի: Իւր բոլոր դրուածքների մէջ հանդէս է դալիս նա իբրեւ բողոքող հասարակութեան մէջ դոյսութիւն ունեցող այս կամ այն բռնացող սովորոյթի և կարծիքի դէմ: Ամենուրեք խաբանւում են հնացած կարգերն ու կարծիքները:

Բայց նպատակադարձար է խնդրին աւելի կոնկրետ կերպարանք տալ:

«Ցաւագարը» մի գանգատ է այն արիւնարբու հասարակութեան վրայ, որ կին-հիւանդի մէջ թշնամի է նկատում և աշխատում է ոչնչացնել նրան:

«Կրակը» զօրեղ և միջավայրին չենթարկուող անհատականութեան աղաղակն է, որ հալածւում և զրկանքներ է կրում շրջապատից:

Ինչո՞ւմն է «Նամուսի» դրամատիզմը, եթէ ոչ նրանում, որ հայրը երկիւղ կրելով իւր պատուի ստորացումից խլում է աղջկան իւր սիրեկանից և տալիս մի ուրիշին, որին նա, (դուստրը) չէ սիրում: Վէպը ողբերգութեան է փոխւում նրանով, որ Ռուստամը հաւատալով սուտ խօսքին, թէ իւր կինը կոյս չէ եղել, սպանում է նրան դաշոյնով: Վէպի մէջ ակներև է հեղինակի վերաբերմունքը և ուժեղ բողոքը սխալ հասկացուած «նամուսի» դադարիարի դէմ:

Իսկ ի՞նչ է «Սրամբին», եթէ ոչ դարձեալ բողոք այն հին կարգի դէմ, որ արգելում է սիրել ամուսնուց, այս դէպքում անհաւատարիմ ամուսնուց, չբաժանուած կնոջը:

Ի՞նչ է «Մելանեան», եթէ ոչ նոյն ճիշդ, թէ չէ կարելի առանց սիրոյ կապել առնականութիւնը կորցրած ծեր աղամարդուն դեռ ևս նոր փթթող կնոջ հետ, որ ցանկանում է վայելել ընտելեան՝ իւր մէջ թագցրած ոյժերի գործադրութեան հաճոյքը:

Մի՞թէ նոյն վրդովմունքը չէ նկատւում օրեկտիւ նկարագրութեան յետևից, երբ մենք հանդիսատես ենք լինում «Արսէն Դիմաքսեան» վէպում Բարաթեանի և Գայիանէի ամուսնութեան և բաժանման տեսարաններին: Եւ այլն և այլն:

Տեսնում ենք, որ Նիրվանադադէի վէպերը աղաղակում են անհատականութիւնը խեղդող, պատուի, «նամուսի», ամուսնութեան և սիրոյ նախկին ըմբռնումների և կաշկանդիչ կապերի դէմ: Նոյն երկերը նշանաւոր են նաև նրանով, որ նրանց մէջ ուժգին շեշտւում է, թէ կինն էլ աղամարդու պէս մարդկային արժանապատուութիւն և կեանքի ու սիրոյ հաճոյքները վայելելու իրաւունք ունի: Այս երկերի հերոսների ընդհանուր գիծն այն է, որ նրանք սակաւ բացառութեամբ ձգտում են անհատական երջանկութեան: Հասարակական քաղաքական տարրը ընդհանրապէս բացակայում է: Կրօնական-ճգնական կապերից աղտաւորւած մարմինը ձգտում է զգայական հաճոյքի:

VI

Մի վերջին հարց, քաղաքի կեանքը նկարագրող վէպի այս փնդիւնները քաղաքի հատարակութեան զարգացման ամէն մի աստիճանի վրայ կարող են առաջանալ, թէ՛ կապուած են այդ կեանքի զարգացման որոշ ֆազի հետ:

Շիրվանզադէի երկերի վերլուծութիւնը հնարաւորութիւն է տալիս այդ էլ որոշելու: Հարցի լուծմանը նպաստում են մի քանի հանգամանքներ:

Նախ այն, որ հեղինակը մաքառում է կնոջ և տղամարդու սիրոյ ազատութիւնը խանգարող որոշ կապանքների դէմ: Եթէ քաղաքի կեանքը, աւելի ճիշտ, բուրժուական դատակարգի զարգացումը շատ առաջ է գնացած լինում, նա կարողանում է խորտակել եկեղեցւոյ և գիւղական համայնքից ստացած՝ սիրոյ ազատութիւնը խանգարող հին օրէնքներն ու սովորոյթները: Մինչդեռ Շիրվանզադէի վէպերում տեսնում ենք, որ այդ կապանքները չեն խորտակուել, նրանց դէմ մաքառում են հերոսները և ինքը—հեղինակը: Նշանակում է այդ վէպերը արդիւնք են ոչ թէ կապիտալիստական տնտեսութեամբ շատ առաջ գնացած քաղաքի կեանքի, այլ այնպիսի մի միջավայրի, որտեղ այդ կարգերը նոր են սկսել զարգանալ: Եւ իսկապէս, մեր արդիւնաբերական կենդրոնները այժման առաջ չեն գնացել, որ նրանց ազդաբնակութիւնը աղաատ լինի գիւղական հնաւանդ սովորոյթներին:

Երկրորդ հանգամանքը, որով կարելի է մօտենալ հարցի լուծմանը, այն է, որ այս հեղինակի վէպերում քաղաքացւոյն են հատարակական—քաղաքական ուժգին մաքառումները: Ի՞նչն է սրա պատճառը: Ոչ այլ ինչ, եթէ ոչ դարձեալ նոյն բուրժուական դատակարգի անզարգացած լինելը: Կապիտալիզմը նոր է սկսուած այդ երկրում և դեռ չէ զգում քաղաքական շղթաների ծանրութիւնը: Քաղաքական կարգերի քննադատութիւնից առաջ նա զբաղուած է կրօնական, բարոյական քննադատութիւնների քննադատութեամբ, մի երևոյթ, որ միայն հայկական իրականութեան սեփականութիւն չէ, այլ յատուկ է եղել և եւրոպական ազգերին:

Մի ուրիշ նշան էլ կայ, որ ցոյց է տալիս, թէ Շիրվանզադէն իւր վէպերի գրութեան ժամանակ տպաւորութիւններ տաացել է արդիւնաբերութեամբ դեռ ևս ոչ բողբոլին զարգացած քաղաքների կեանքից: Այդ նշանը նրա հերոսների՝ հասարակութիւն ձեռք բերելու համար դորժադրած միջոցներն են

և այդ հարստութիւնը ժառանգելիս գործադրելու եղանակը: Այնտեղ, ուր կապիտալիզմը ընթանում է իւր ամբողջ թափով, հարստութեան ձգտողը ստիպուած է լինում իւր նիւթական միջոցները գիտութեան տուած գէնքերով, տեխնիկայի զարգացմամբ, շուկան ընդարձակելով և ճարպիկ մրցումով շատացնել: Իսկ որտեղ կապիտալիզմը թոյլ է, նոյն կարգի մարդիկ գործադրում են զանազան աչքակապութիւններ ու խաբէրայութիւններ, ինչպիսին են՝ չափի ու կշռի կեղծիք, գործի ընկերների դաւ, նենգ սնանկութիւն և այլն: Ճիշտ վերջին կարգի մարդկանց ենք տեսնում մենք Նիւլանդագէի երկերում, ինչպէս և Աստորոլսկու գրուածքներում:

Իսկ որանից, որտեղ կապիտալիզմը զարգացած է, այնտեղ մենք տեսնում ենք վաճառականի ու արդիւնաբերողի մի գիտակից տիպ, որ արթուն հետևում է փողի աշխարհի տատանումներին, մի տիպ, որի հայեացքի հորիզոնը ընդարձակ է, որ գիտէ փողի ոյժը և արժէքը, միաժամանակ հասկանում է, որ պէտք է գործել, պէտք է մի վայրկեան անգամ իւր փողերը հանգիստ չթողնել, ապա թէ ոչ արթուն մրցակիցը նրան օգը կցնդեցնէ. մի տիպ, որ հեռու է անմիա վատնութիւնից, չափազանց շուտութիւնից: Այս կարգի առևտրականն ու արդիւնաբերողը նոյն ոգով էլ հէնց իւր գործի մէջ կրթում է իւր զաւակին, իսկ վերջինս իբրև ձեռնարկող նման է լինում հօրը և յաճախ էլ նրանից աւելի բարձր: Իսկ հակառակը, որտեղ առևտրական և արդիւնաբերական ձեռնարկութեան յաջողութիւնը արդիւնք է մի պատահմունքի, բաղդի մի խաղի, այնտեղ հարստութիւնը շուտով էլ չքանում է մէկ կամ երկու սերունդից յետոյ, սերունդ, որ մասնկութիւնից չէ տեսել, թէ ինչ ասել է եւրոպական տիպի առևտրական կամ արդիւնաբերող, սերունդ, որ ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել իւր հօր գործերի մէջ և դադարիւր էլ չունի նրանց մասին, սերունդ, որ կարծում է, թէ հարստութիւնը մի անտակ ծով է, որից սրբան էլ շաղ տաս, էլի անուպառ կմնայ: Նիւլանդագէն ունի այսպիսի վատնող, փչացնող զաւակների տիպեր, որոնք քաջառիկ երեոյթ չեն և մի նոր տպացոյց են, որ նրա երկերը կապիտալիստօրէն դեռ շատ առաջ չդնացած քաղաքներին կեանքի պատկերն են ներկայացնում:


Կարծում ենք, ժամանակ է եղբակացութեան դիմելու: Այն է, որ վէպի նիւթով և յարուցած խնդիրներով Նիւլանդագէի գրական գործունէութիւնը մեր վիպագրութեան մէջ ահագին առաջադիմութիւն է մտցնում, որովհետև այդ գոր-

ծունելութիւնը համապատասխանում է կեանքի աւելի բարձր աստիճանին — քաղաքային կուլտուրայի աստիճանին, որ ամեն տեղ աւելի յետոյ է զարգանում, քան զիւղականը:

Թագ. Աւդալբեգան.

1910 թ. ապրիլ.

Վաղարշապատ.



Պրոֆ. Մառի լեզուաբանական նոր դրոյթներ

Պրոֆ. Մառը՝ ոչ նշանաւոր տեղ ունի հայագիտութեան մէջ իւր բազմաթիւ բանասիրական և հնագիտական գործերով, ահա մի քանի տարի է քարոզում է մի նոր լեզուաբանական դրոյթիւն, որ յատկապէս հայերէնի համար խոշոր նշանակաւորն է և սպասում է հիմնովին փոխել հայ լեզուաբանութեան արդի կերպարանքը:

Որպէսզի կարելի լինի բացատրել ընթերցողներին այս դրոյթեան էութիւնն ու նրա մեծ նշանակութիւնը, հարկ եմ համարում նախապէս տալ մի քանի ընդհանուր ծանօթութիւններ լեզուների ազգակցութեան և նոցա գիտական դասաստիճանութեան մասին:

Աշխարհիս վրայ սիւսուած են հազարաւոր լեզուներ. արտաքին երևոյթով այս բոլոր լեզուները իրարից անհաւասանջատ են. ուսկայն լեզուաբանութիւնը խորասուզուելով նոցաներին քննութեան մէջ՝ գտել է, թէ այդ լեզուների մեծ մասը ընդհակառակը իրար հետ անձուկ կապակցութիւն ունին և ծագում են մի քանի ուսկաւածիւ հնագոյն (այժմ կորած) լեզուներից: Այդ կորած լեզուները՝ որոնցից խումբ խումբ նոր լեզուներ են ծագել, կոչւում են նախամայր. մի նախամայրից ծագած այլ և այլ հնագոյն լեզուները կոչւում են մայր. որոնցից յառաջացել են միւս նորագոյն լեզուները. իսկ մի նախամայր լեզուի, նրանից ծագած մայր լեզուների և նոցա յաջորդների ամբողջութիւնը կազմում է մի լեզուախումբ: Կարող ենք ասել՝ թէ իրաքանչիւր լեզուախումբ ամենահին նախապատմական ժամանակներում կազմել է մի ազգութիւն կամ մի ժողովուրդ և հետեւեալոր նոյն լեզուախումբին պատկանող բոլոր ազգերը նոյն հնագոյն ազգութեան կամ ժողովրդի բեկորները, նրանից